

REVUE DES ETUDES ARMÉNIENNES. *Nouvelle série*. I II.
 ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ. Առաջին շարք, հատ. II, 191 էջ, Փարիզ, 1965.
 III. Առաջին շարք, հատ. III, Փարիզ, 1966, հրատարակվում է Գալուստ Կյուլ-
 աենկյան հաստատության նպատակով, տպագրված է Լուվենում (Քելվինյա).
 նույն խմբագրական կազմով, տնօրեն՝ է. Սենվենիսա, հատուկաբար՝ Հայկ
 Պերպերյան:

Փարբգում հրատարակվող հայագիտական հանգեւր II հատորում ընդգրկված են հայ լեզ-
 վաբանության, հարաբերությունների, բանասի-
 րության, մանրանկարչության, հայոց պատմու-
 թյան, պատմական աշխարհագրության, հայերեն
 ձեռագրերի վերաբերյալ ուսումնասիրություններ
 և գրախոսություններ, որոնց հեղինակները տար-
 բեր ազգերի գիտնականներ են: Հոկ մատենա-
 գիտական տեղեկություններ տալու նպատակով
 շատ հակիրճորեն ներկայացնենք լույս տեսած
 հոգվածները, որոնք, խմբագրության ընդունած
 սկզբունքների համաձայն, շարադրված են ֆր-
 րանսերեն կամ անգլերեն:

Հանդեսի այս հատորում համեմատաբար լայն
 տեղ է հատկացված հայերենագիտությանը (ըս-
 տուգրանություն, ձևաբանություն, բարբառա-
 գիտություն): Վերջին հիսնամյակում ուսումնա-
 սիրվել են իրանական շատ բառեր, և այդ ու-
 սումնասիրությունների լույսի տակ լեզվաբան-
 ները նոր հեռաբորբությամբ են վերանայել հա-
 յերենի բառապաշարը. ստուգաբանվել են հայի-
 րեն նոր բառեր, կամ որոշ ստուգաբանությու-
 ներ շարվել են: Մյուս կողմից՝ պարզվել են
 հայերենի փոխառած իրանական շատ բառերի
 բարբառային պատկանելությունը և նրանց ձայ-
 նավորումը: Պարզվում է, որ հայերենի իրանա-
 կան փոխառությունները դալիս են ոչ միայն
 պարթևականից կամ պարսկականից, ինչպես
 կարծում էին համեմատական քերականության
 սերկայացուցիչները, այլև իրանական ուրիշ
 բարբառներից ևս: Այս ընդհանուր թեմային են
 նվիրված Հ. Ու. Բայլեի «Իրանականը հայերե-
 նում» (էջ 1—3) և է. Բենվենիստի «Հայ. արե-
 զակն և -ակն վերջահանգով անվանական բա-
 ռարարդումը» (էջ 5—19) հոդվածները. առա-
 ջինում խոսվում է հայերեն աշտեայ, մարգ (սի-
 րամարգ, լորամարգ), պաշտ- (պաշտպան)
 փոխառյալ բառերի, հրա- մասնիկի, նիշկահեմ
 և գրոս- ձևերի մասին:

Առաջին անգամ չէ, որ է. Բենվենիստի իրա-
 նագիտական հետազոտություններից շատում
 նաև հայերենագիտությունը: Կանգ առնենք նրա
 հոգվածի կարևոր կետերի վրա: Նա ուսումնա-
 սիրում է -ակն վերջավորվող հայերեն արե-
 զակն, կայծակն, փայլակն և զիակն բարդ
 ուրիշ՝ ապացուցելու համար, թե ինչ կապ
 նրանց վերջավորության և ակն դոյականի միջև,
 և եթե դա ակն դոյականն է, ապա ի՞նչ իմաստ
 ունի՝ աչք, աղբյուր, թե՛ թանկագին քար:
 Հյուրըման բավարարվել է այդ խնդիրը միայն
 առաջադրելով: Մեյեն արեզակն և փայլակն բա-
 ռերում -ակն-ը համարել է աչք: Ցենսներ և
 ուրիշներն -ակն-ը մեկնաբանել են իրեն վեր-
 ջածանց: Ուստի, ինչպես նկատելի է, խնդիրը
 բարդ է: Հոգվածագիրն իր վերլուծությունները
 կատարել է հայկական մատենագրությունից
 քաղված բոլոր վկայությունների հիման վրա և
 հայտնաբերել մինչ այդ աննկատ մնացած ա-
 ռանձնահատկություններ: Նախ՝ արե և արեզակն
 տարբերակների գործածությունների համեմա-
 տությամբ նա գտել է դրանց իմաստային տար-
 բերությունը. արե-ը աստղաբաշխական միավոր
 է, լույսի աղբյուր, իսկ արեզակն-ը մարդկանց
 արևն է, մերթ տեսանելի, մերթ թաքնված, պաշ-
 տամունքի և պատարագների առարկան, զեղե-
 ցիկի և փառահեղի խորհրդանիշ: Այնուհետև
 հոգվածագիրը պարզել է արեզակն-ի բառային
 կազմությունը արե-ի համեմատությամբ, արեզ-
 -ի և արե-ի ձևաբանական հարաբերությունը և
 -ակն-ի իմաստը: Հստ Հ. Աճառյանի և Ա. Մե-
 յեի -ակն=«աչք», արեզակն=«արևի աչք», իսկ
 արեզի-ն հավանաբար սեռականի հին ձևն է.
 բայց պետք է կարողանալ ապացուցել արեզ-
 ձևի սեռական իմաստը բարդության մեջ: Արե-ի
 և արեզակն-ի հարաբերակցությանը տրված հըն-
 շյունաբանական բացատրությունները հոգվա-
 ծագիրը համարել է անբավարար: Նա դիմել է
 հատկապես տեղանուններում արեզ բառի կի-

բառություններին: Արեգ ֆաղափ-ի մեջ արեգ-ը ֆաղափ-ի լրացումն է և հունարենի հետ համեմատած՝ արե-ի սկզբնական սեռականն է հավանաբար: Նույնն է ենթադրել տալիս նաև ջուր արեգ աղբեր բառակապակցությունը (Յեսու, ԺԵ, 7), հունարեն թարգմանության մեջ՝ «արևի աղբյուր»: Հայերեն հին ամսանունների շարքում, որոնք սեռականի ձևեր են (հրոտից, մարգաց և այլն), կա և արեգ անունը, ուստի պետք է ենթադրել, որ այն ևս սեռական է: Վկայություն բերված է նաև Ագաթանգեղոսից՝ Անթաղեալ ընդ ֆաղափամէջսն ելանէր ընդ արեւելս կոյս ընդ Արեգ ղուոն ֆաղափին (Թիֆլիս, 1909, էջ 104). այսպիսով՝ արեգակն-ի մեջ արեգ-ը սեռական է (կազմության համար հմտ. եղբաւորդի. մանավանդ աղբերակն): Եթե այդ այդպես է, ապա ինչ է նշանակում -ակն-ը՝ «աչք», թե՛ «աղբյուր»: Քանի որ արեգակն-ը հողնակիւմ լինում է արեգակունք, և ակն-ը՝ աղբյուր՝ ակունք, ուրեմն արեգակն-ում ակն = «աղբյուր, ցայտման անցք»: Ըստ Բենվենիստի -ակն-ը այս իմաստն ունի նաև փայլակն բառում: Նա քննության է առել նաև կայծակն բառը, Աստվածաշնչի վկայությունների վերլուծությամբ պարզել նրա իմաստը. դրանում էլ առկա է ակն «աղբյուր»: Դի և դիակն (հոգն. դիակունք) բառերի գործածությունների քննությունից հողվածագիրը եզրակացրել է, որ նույն -ակն-ը կանաև դիակն-ի մեջ, բայց այլևս մթազնվել է նրա «աղբյուր» իմաստը, և «այս առանձնահատուկ զարգացումը բարդության առաջին եզրի վերջին իմաստափոխությունն է, որով այն կորցրել է իր բուն իմաստը և գործնականում դարձել ածանցական տարր»: Մենք լուկ ամփոփեցինք հողվածագրի կարծիքները:

Հայագետ Զ. Դաուսեթը մանրամասն քննել է (էջ 117—128) նիւթ—նիւթեմ, նիւթ—նիւթեմ զույգ բառերի իմաստներն ու գործածությունները դասական և միջին հայերենում: Ինչպես հայտնի է, դրանք հայերենի բառարաններում անբավարար շափով են բացատրված, հաճախ միացված են «նյութ, մատերիա» հասկացության տակ: Դրանք ավելի լավ վիճակում չեն գտնվել նաև ստուգաբանողների ձեռքում, որոնք փորձել են վերականգնել դրանց սկզբնական ձևերը՝ առանց հաշվի առնելու բնագրերում նկատելի դրանց իմաստային զարգացումները, որ հողվածագիրը ցույց է տալիս հինգերորդ և միջին դարերի հայ մատենագրությունից բաղված վկայություններով: Դաուսեթը քննության է առել նաև այս բառերի համար առաջարկված ստուգաբանությունները և տվել իր բացատրությունները, որոնք բխում են մի շարք լեզուների հետ կատարված համեմատություններից:

Ժնեցի Ռ. Գոդելի հողվածը (էջ 21—41) ներկայացնում է գրաբարի խոնարհման ծագմանը, Նա ձգտել է պատմա-համեմատական մեթոդով վերականգնել ոչ այնքան սկզբնական բայաձևերը, որքան խոնարհման նախապատմական վիճակն ընդհանրապես վերցրած (որն անպայման հրեղեղեղական ծագում ունի), ինչով է խոնարհման նոր համակարգը կապվում հին և այն շարունակում՝ շնայած բոլոր նորագոյացումներին: Փաստերը քննելուց հետո հողվածագիրը եզրակացնում է, որ ներկայի փոքրաթիվ ձևեր են միայն անմիջականորեն շարունակում հրեղեղեղական ներկաները, որոնք վկայված են նաև հնդեվ. այլ լեզուներում: Հնդեվ. կազմություններից են ծագել նաև հայերենի ներկայի այլ ձևեր, որոնց համար, սակայն, չունենք պատմական հավաստի ստուգաբանություններ: Հայերենի խոնարհման հիմքում ընկած են նաև հնդեվ. անցյալ անկատարը և անցյալ կատարյալը: Գոդելը փորձել է ցույց տալ հայերենի խոնարհման համակարգի ծագումը, մի կողմ թողնելով նրա հետագա պատմական զարգացումը: Նրա կարծիքով հայերենի խոնարհման այլ հարցեր ևս կարելի է լուծել իր ընտրած ճանապարհով, մանավանդ դիմային վերջավորությունները, որոնց գուտ հնչյունաբանական ստուգաբանությունները տալիս են անհավաստի կամ հակասական արդյունքներ:

Գովելի է, որ Հանդեսում (էջ 411—434) ֆրանսերեն թարգմանությամբ, որ ինչպես պարզվեց ստուգումից՝ լավ է կատարված, վերահրատարակված է Գ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովական սխտեմը և նրա ծագումը» արժեքավոր աշխատության (Երևան, 1959) ուսերեն ամփոփումը. սակայն, մի կարծիքով, նպատակահարմար էր այն գետեղել լեզվաբանական հողվածների շարքում և ոչ թե գրախոսությունների բաժնում, ինչպես որ խմբագրությունը վարվել է Վ. Մինորսկու հողված-գրախոսության հարցում, որի մասին՝ քիչ հետո:

Հանդեսի այս հատորում վերջանում է Պ. Յունգմանի «Դասական հայերենի որոշիչ հողը» հողվածը (էջ 43—117), որի առաջին մասը լույս էր տեսել առաջին համարում: Այսպիսով, ինչպես ասված է եզրակացության մեջ, հողվածագիրը երևան է բերել հողի մինչև այժմ աննրկատ մնացած կրկնակի բնույթը՝ իմաստի և պաշտոնի տեսակետից. իմաստային կողմը երկրորդական է, որովհետև դրանով որոշվում է հողի ոչ թե կիրառությունը, այլ միայն ձևը: Հողի կիրառությունը, այսինքն՝ նրա առկայությունը կամ բացակայությունը որոշվում է միայն վերաբերությամբ արդեն հիշատակված առարկաների կամ անձի անունների վերաբերություն,

ընդհանրապես հայտնի իրերի վերաբերություն, լռելյայն իմանալի հասկացությունների վերաբերություն: Ուստի գրաբարի հոդի մասին պետք է խոսել ոչ թե ոճաբանության, այլ շարահյուսության մեջ, քանի որ հոդը շարահյուսական միջոց է:

Ֆրանսիացի Ժ. Դյումեզիլը որպես ազգագրագետ հայտնի է կովկասյան ժողովուրդների վերաբերյալ իր հրատարակություններով: Հայագիտությանը նա ծառայում է բարբառագիտական և այլ ուսումնասիրություններով: Հանդեսի այս համարում նա լույս է ընծայել «Դիտողություններ Արդալայի մահմեդական մի հայի խոսվածքի վերաբերյալ» (էջ 135—143) հոդվածը: Խոսքը Համշենի բարբառի մասին է: Հեղինակը նկատել է տալիս, որ ինչպես 1964 թ. Ինդիայում հրատարակած, այնպես էլ այս հոդվածում իր նկարագրած խոսվածքը (հեմշինի) զգալիորեն տարբերվում է Հ. Աճառյանի ուսումնասիրած Համշենի բարբառից: Ժ. Դյումեզիլը եվրոպական տառադարձությամբ և ֆրանսերեն թարգմանությամբ ներկայացրել է Համշենի բարբառով շորս հատված, որ 1964 թ. ամռանը Պոլսում դրի է առել XVIII դ. բռնի մահմեդականություն ընդունած հայ պապերից սերած մի երիտասարդի թելադրությամբ: Նշվում են խոսվածքի հնչյունական և ձևաբանական մի քանի առանձնահատկություններ միայն: Հոգվածն արժանի է բարբառագետների ուշադրության. հոգվածագիրը նրանց է թողել հրատարակված այս հատվածների բարբառագիտական լրիվ ուսումնասիրությունը և համեմատությունը Հ. Աճառյանի ուսումնասիրության հետ:

Հանդեսում տպագրված է Աշոտ Հովհաննիսյանի «Հայերենի այբուբենը և նրա պատմական նշանակությունը» հոդվածը (էջ 361—375), որ նույնպես կարելի էր զետեղել ավելի առաջ՝ բանասիրական հոդվածների շարքում. այս բաժնում է բիրմինգհամցի Սեբաստիան Բրոկի հոդվածը (էջ 129—135), որտեղ նկարագրված է Բիրմինգհամ քաղաքի Selly Oaks College դպրոցի գրադարանի մի կրկնագիր արաբերեն ձեռագրի պատառիկ: Արաբերեն վերջնական բրնագիրը IX դարից է. դրա տակ բավականին լավ են ընթերցվում Պողոս առաքյալի «Թուղթ առ Եբրայեցիս» գրվածքի ԺԱ գլխի 24—32 երկսյուն գրաբար տողերը: Հոգվածագրի կարծիքով այս պատառիկի հայերեն գրչությունը կարող է IX դարից էլ վաղ լինել: Բերված է կարգացվող բնագիրը, վերջում նշված են դրա և Զոհրաբի հրատարակության տարբերությունները, տրված են պատառիկում հանդիպող հայերեն գրերի գրության ձևերը: Հոգվածագիրը կարծում է, որ դա Պողոս առաքյալի այս թղթի հայերեն հնագույն հայտնի բնագիրն է:

Շատ է պատահել, որ հասարակական, բուսաբանական, քիմիական, մաթեմատիկական և այլ գիտությունների ոչ միայն հայ, այլև արևմտյան հետազոտողներ հարկադրված են եղել հայերեն ձեռագրերից քաղել իրենց այլուր չգրտած տեղեկությունները. դրա պատճառները բոլորիս հայտնի են. դրանով անշուշտ բարձրանում է հայ մատենագրության արժեքը մարդկային հոգևոր մշակույթի ասպարեզում: Դրանով է բացատրվում նաև արևմտյան արևելագետների հայերեն սովորելու ձգտումը: Նշենք, որ Փարիզի «Էնստիտյու կաթոլիկ» հոգևոր բարձրագույն դպրոցում ևս 1924 թ. հայագետ Լուի Մարիեսի շնորհիվ դասավանդվում է գրաբար: Այս անգամ, ահա, ֆրանսիացի մի եկեղեցական՝ Ա. Ռենուն օգտվելով Երուսաղեմի Ընթերցարանից հայերեն ձեռագրից և հայերեն մի շարք այլ ձեռագրերից՝ աշխատել է նկարագրել, թե հայտնության տոնի (հունվարի 6-ին) ծիսակատարություններն ի՞նչ կարգով էին տեղի ունենում Երուսաղեմի մայր եկեղեցում IV—V դդ. (էջ 493—461): Նա հայկական ձեռագրին է դիմել, որովհետև նրան հետաքրքրող հարցում լատինականը թերի է: Ի դեպ, հանդեսի այս համարում Ա. Ռենուն գրախոսել է Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցութեան» դիրքը (Վենետիկ, 1964), որ նույնպես օգտագործել է իր այս հոդվածը շարադրելիս:

Ֆրանսիացի Ն. և Մ. Թիերի ամուսինները շարունակում են տեղում ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի մեր սլատմական հուշարձանները: Նրանց ուսումնասիրությունները, որոնք լույս են տեսնում Հանդեսի բոլոր համարներում, առաջել հետաքրքրական են, որովհետև հեղինակներն ամեն ամառ ճանապարհորդում են հայ հին հուշարձանների վայրերում և անձամբ լուսանկարում ու նկարագրում հուշարձանների արդի վիճակը: Մի քանի տարի առաջ նրանք այցելեցին նաև Սովետական Հայաստան: Հանդեսի այս համարում (էջ 165—185) նրանք նկարագրել են Անիի և Վանի շրջակայքի հուշարձանները, որ տեսել են 1964 թ.: Հոգվածի մեր մասնակի թարգմանությունը կարելի է կարդալ «Սովետական արվեստ» ամսագրի 1966 թ. ութերորդ համարում:

Ա. Խաչատրյանը ներկայացրել է (էջ 223—239) Ն. Տոկարսկու ուսերեն աշխատությունը հին Հայաստանի ճարտարապետության վերաբերյալ (Երևան, 1946, 2-րդ հրատ. 1961): Համեմատելով աշխատության երկու հրատարակությունները՝ հոգվածագիրը աշխատում է ցույց տալ հայ հնագիտության առաջընթացը 1946—1961 թթ.:

Հանդեսի այս համարում Տ. Ա. Իզմայլովան ավարտել է իր ընդարձակ ուսումնասիրությունը:

ներ Սրեանի Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2827 հայերեն ձեռագրի (գրվ. 1183 թ.) մանրանկարների վերաբերյալ: Ինչպես համեմատաբար ասված է վերջարանում, այստեղ ավելի շուտ միայն առաջագրված են, քան լուծված XII դ. հայ մանրանկարչության ծաղկման հետ կապված բազմաթիվ հարցեր: Դա բացատրվում է այս բնագավառում հետազոտությունների բացակայությամբ: Հայկական մանրանկարչության պատկերագրությունը շատ քիչ է ուսումնասիրված: մինչդեռ այն կապված է միացել այս արվեստի հնագույն նմուշներին և կարող է լույս բերել քրիստոնեական արվեստի սկզբնական շրջանների վրա:

Հանդեսում մեծ տեղ է հատկացված հայոց պատմության հետ կապված հարցերին: Հայտնի պատմաբան Վ. Մինորսկին ներկայացրել է (էջ 143—165) Մարկվարտի Sudarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen աշխատությունը (Վիեննա, 1930, 125+648 էջ): Գրախոսը նպատակ չունի թերություններ կամ անհետևողություններ վերահանել Մարկվարտի շատ արժեքավոր աշխատության մեջ: Նա միայն ուզում է օգնել բնթերցողին, որ նա կարողանա գլուխ հանել հնդրնակի խիստ գիտական, բազմաթիվ հավելվածներով, ծանոթագրություններով և նյութից կատարված շեղումներով ծանրաբեռնված աշխատությունից, որը շարադրանքի բնթացքում գլուխների անգամ բաժանված չէ: Այս բոլորի պատճառն այն է, որ Մարկվարտն իր աշխատությունը հատվածաբար է լույս բնծայել 1904—1929 թթ., երբ պատմագիտությունը Հայաստանի վերաբերյալ նորանոր փաստեր էր բնծեռում: Մինորսկին ամբողջ աշխատությունը բաժանել է չորս մասի և ըստ այնմ ներկայացրել դրանց բովանդակությունը: Նա ուշադրություն է հրավիրել աշխատության ներածականի վրա, գրված 1929 թ.: որտեղ արտացոլված է Մարկվարտի հայասիրական և հայապաշտպան գիրքը: Մինորսկին պատմում է, որ պարսիկ հայտնի բանասեր կազվինի վկայությամբ 1915 թ. Բեռլինում տեղի ունեցած խիստ պաշտոնական մի նիստի ժամանակ, որտեղ քննարկվել են դաշնակիցների հետ բարեկամական կապերն ամրապնդելու ուղիները, Մարկվարտը հանկարծ խոսք է խնդրել նիստի նախագահից և, առանց տեղն ու ժամանակը հաշվի առնելու, ամենահատու խոսքերով քննադատել 1915 թ. Հայաստանում կատարված շարաբաստիկ իրադարձությունները և բողոքել դրանց դեմ: Նիստի նախագահը փորձել է լռեցնել նրան, բայց Մարկվարտն ասել է իր ամբողջ ասելիքը: Մինորսկու հոգվածին կցված է Հայաստանի պատմական մի քարտեզ:

Մ. Կանարը (Փարիզ) քննել է (էջ 239—259) Ալֆ Արսլանի արշավանքը Հայաստան և Անիի գրավումը 1064 թ., որ մի քանի տարբերակով են պատմել քրիստոնյա, արաբ, պարսիկ և հույն պատմագիրները: Կանարը թարգմանել է քաղաքի առման նկարագրությունները և դրանք համեմատելով հայ պատմագիրների տեղեկությունների հետ՝ փորձել է հասկանալ, թե անառիկ համաշրջող այս խիստ ամուր քաղաքն ինչպե՞ս է բնակել թշնամու ձեռքը, որն արդեն պատրաստվել էր հեռանալ: Նա հանգել է հետևյալ եզրակացության. «Անիի գրավումը բացատրվում է ոչ միայն ռազմական պատճառներով՝ թուրքերի ուժով, բլուզանդական պահակազորի անբավարարությամբ, այլև բարոյական պատճառներով՝ քաղաքում տիրող անհամաձայնությամբ, դիմադրողական ոգու պակասով, ղեկավարների նկատմամբ բնակչության անվստահությամբ» (էջ 259):

Վիմական արձանագրությունների և ժամանակագիրների տվյալների քննադատական վերլուծությամբ Հ. Բարթիկյանը աշխատել է որոշել Արեւելքի կատեպան Մագիստրոս Բագարատի և կեկաունմենասների ծննդաբանական հաշորդականությունը (էջ 261—271):

Ճրանսերեն թարգմանությամբ վերահրատարակվել են Վազգեն Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ» աշխատության երկրորդ հատորի (Երևան, 1965 թ.) 45-րդ ծանոթագրությունը (էջ 156—162), որ վերաբերում է Աշոտ Բագրատունու զահակալության թվականին, Կ. Դաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության ուսերեն ամփոփումը, Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 10, էջ 85—98) Դվին քաղաքի ժամանակագրության վերաբերյալ:

Ինչպես անցյալում, այսօր էլ հայերեն կարդացող արևմտյան սակավաթիվ գիտնականները օտարազգի մասնագետներին ծանոթացնում են հայ գիտնականների հայերեն կարևոր աշխատություններին: Դրան նպաստում է գրախոսվող Հանդեսը: Վաչինգտոնից Ռոբերտ Հ. Հյուսթեն իր հոդվածում (էջ 319—432) հայտնում է, որ ինքը ձեռնարկել է «Աշխարհացույցի» անգլերեն թարգմանությունը: «Այս աշխատությունն այնքան կարևոր է և արժեքավոր Հայաստանի պատմության անցյալին իսկապես հասկանալու տեսակետից, որ դրա շուտափույթ թարգմանությունը արևմտյան որևէ լեզվով հրամայական անբաժեշտություն է այս բնագավառի մասնագետների համար», — գրել է նա (էջ 323): Իր հոգվածում նա ամփոփ ներկայացրել է Սուրեն Սրենյանի «Հայաստանը ըստ Աշխարհացույցի» (Երևան, 1963) «արժեքավոր ուսումնասիրությունը՝ հուսալով դրա վրա հրավիրել արև-

մըտյան մասնագետների ուշադրությունը: Նախ-
քան այդ նա վերանայել է «Աշխարհացոյցին»
վերաբերող բանասիրական խնդիրները: Հոգվա-
ծագիրը շատ կարևոր և ինքնուրույն նպաստ հա-
մարելով Ս. Սրեմյանի՝ Հայաստանի, Իրերիայի
և Աղվանների «աշխարհների և գավառների»
ցանկը, այն լրիվ վերարտադրել է Հանդեսի ըն-
դունած եվրոպական տառադարձությամբ և տո-
ղատակում ավելացրել իր ծանոթագրություն-
ները:

Յա. Դաշկևիչը երկու հոգվածում ուսումնասի-
րել է Ուկրաինայի հայկական գաղութի կյանքին
վերաբերող ժամանակագրությունները:

Հանդեսում գրախոսված են քսանից ավելի
հայագիտական աշխատություններ՝ գրված հա-
յերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով: Եվ-
րոպացի գիտնականների գրախոսականներում
ավելի ու ավելի է շեշտվում մի պահանջ ցան-

կալի է, որ հայ մատենագրության գոնե կարևոր-
երկերի արդեն հնացած թարգմանությունները
փոխարինվեն ծանոթագրված նոր թարգմանու-
թյուններով:

Շնորհակալության արժանի գործ է կատարում
Հայկ Պերպերյանը որպես գրախոս. այս հա-
մարում նա տեղեկություններ է տալիս տաս-
ներկու ստվարածավալ աշխատությունների մա-
սին:

Հատորի վերջում նշված է խմբագրության ըս-
տացած դրականության ցանկը, որը մասնակի
գաղափար է տալիս հրատարակվող հայագի-
տական աշխատությունների մասին:

Հանդեսի խմբագրությունը գովասանքի և քա-
ջալերանքի է արժանի հրատարակվող նյութերի
բնությունյան և տպագրության բարձր որակի
համար:

* * *

Հայագիտական հանդեսի III հատորը ձոն-
ված է վաստակավոր արվեստագետ Սիրարփի
Տեր-Ներսեսյանի ծննդյան յոթանասնամյակին.
սրված են նրա լուսանկարը, յոթ աշխատության
և 46 ուսումնասիրությունների մատենագիտա-
կան ցանկը:

Հատորում ընդգրկված են ուսումնասիրություն-
ներ հայոց լեզվի, հայ բանասիրության, պատ-
մագրության, աշխարհագրության, ճարտարապե-
տության, չափ ու կշիռների, ազգագրության և
արվեստի վերաբերյալ, գրախոսվել են տասից
ավելի հայագիտական կամ հայագիտության հետ
առնչվող աշխատություններ: Աշխատակցել են
հայ և արևմտյան գիտնականներ: Մեծ տեղ է
հատկացված Հայաստանի հայադեմոստրի գոր-
ծնրի ֆրանսերեն թարգմանությանը, որով նրանց
հետազոտությունների արդյունքներին կարողա-
նում են տեղեկանալ արևմտյան գիտնականները:

Համառոտակի անդրադառնանք լույս տեսած
բոլոր նյութերին՝ ըստ հայագիտության առան-
ձին բաժինների:

Ոչ միայն տնօրենի կամ գլխավոր խմբագրի
պաշտոնով, այլև իբրև Մեյի աշակերտ և հմուտ
իրանագետ, է. Բենվենիստը իր պարտքն է հա-
մարում մի գիտական ուսումնասիրությամբ իր
նպաստը բերել այս հայագիտական հանդեսի
յուրաքանչյուր համարին, դրանով օրինակ հան-
դիսանալով խմբագրական կազմի որոշ անդամ-
ներին, որոնցից դեռևս ոչ մի տող չենք կար-
դացել Հանդեսի հատորներում: Նա շարունա-
կում է համեմատորեն ուսումնասիրել իրանա-
կանի և հայերենի բառային կազմի առնչությու-

նեռու Սույն հատորում լույս ընծայած հոգվա-
ծում (էջ 7—10) նա նոր փաստերով ապացու-
ցում է հայ. բուծաճեմ և սանսկր. bhunakti
«վայելել» ու լատ. fungor բառերի համեմատու-
թյունը, որ ժամանակին առաջարկել են Հյուրշ-
մանը և Մեյին: Բայց քանի որ Շեֆտելովիչը
նրանցից տարբեր կարծիք էր արտահայտել,
ուստի Վալդեն կասկածի տակ է առել այդ հա-
մեմատությունը, Հոֆմանը բոլորովին մերժել
է, և հայ. բուծաճեմ բառն այժմ ոչ մի արմատի
տակ նշված չէ արմատական բառարաններում.
«Այդպիսով, — գրում է Բենվենիստը, — առանց
հիմնավոր պատճառի զրկվեցինք մի կարևոր
տվյալից և այնպիսի համեմատությունից, որ
մենք բոլոր հիմքերն ունենք ստույգ համարե-
լու»: Հակառակ նշված լեզվաբանների մերժո-
ղական կարծիքին, Հ. Աճառյանը «Հայերենի
արմատական բառարան»-ում պահպանել է իր
ուսուցիչների առաջարկած ստուգաբանությունը:
Բենվենիստն անհրաժեշտ է համարում հնդեվ-
րոպական ստուգաբանության բնագավառում վե-
րանայել համեմատական բառարաններում տեղ
դրած հայերենի տվյալները. դրանց թերություն-
ներից մեկն այն է, որ իրանական ծագում ունե-
ցող բառեր շփոթվել են բնիկ հայերեն բառե-
րի հետ:

Անգլերեն շարադրած իր հոգվածում (էջ 11—
15) էրիկ Պ. Համպը (Չիկագոյի համալսարանից)
փորձում է ստուգաբանական նոր մեկնություն-
ներ տալ հայ. նև «ամուսնու եղբոր կին», ալո
(սեռ.առն) և գիշեր բառերի մասին. հեղինակը
շատ զգույշ է և հախուռն մտքեր չի առաջար-

կում. նա գիտե անշուշտ, որ ստուգարանությունը լեզվաբանական հեշտ գայթակղությունների բնագավառն է: Հանդեսում հրատարակվող ստուգարանական հոդվածներում ընդհանրապես տեսնում ենք պատմա-համեմատական քերականության և ստուգարանության սկզբունքների խստապահանջ կիրառություն, հայ հին և միջնադարյան բնագրերում ստուգարանվող բառի գրեթե բոլոր գործածությունների նկատառում, առաջարկված ստուգարանությունների քննարկում, մի խոսքով՝ չի նկատվում վերջին կամ նոր խոսք ասած լինելու հավակնություն:

Հանդեսի խմբագրությունն անհրաժեշտ է համարել ֆրանսերեն թարգմանությամբ վերահրատարակել Հ. Բարթիկյանի «Դիտողություններ Դիդենիս Ակրիտաս բյուզանդական դյուցազնավեպի մասին» լույս ընծայած հոդվածը (Византийский временник, 1964, հատ. XXV, էջ 148—166): Թարգմանիչ Մ. Կանարը, որ Հանդեսի խմբագրական կազմի անդամ է, ավելացրել է հղումներ այն սլաոմաէիրնեոի ու այլ հեղինակների ֆրանսերեն թարգմանություններին:

Պատմաբան Պոլ Լըմերլը, որ 1960 թ. Բրյուսելում մի աշխատություն է հրատարակել Կեկաումենոս ընտանիքի մասին, իր «Եր դիտողություններ Վիսկացի-Կեկաումենոս ընտանիքի մասին» հոդվածում (էջ 175—183) անդրադառնում է այս անվան բացատրությանը և հարակից մի շարք հարցերի: Հայտնի է, որ Հանդեսի II հատորում (էջ 261—272) Հ. Բարթիկյանը փորձել էր այն մեկնաբանել: Լըմերլը ինքնաքննադատաբար ուղղում է իր աշխատության մեջ թույլ տված անճշտությունները. մյուս կողմից՝ նշում է, թե որ կետերում համաձայն չէ Հ. Բարթիկյանին և ինչո՞ւ: Ուրախալի է, որ Հանդեսը մտքերի փոխանակման ասպարեզ է հանդիսանում հայրենական և արևմտյան, գիտնականների միջև, որոնք երկուստեք մտահոգված են հայագիտության կամ նրա հետ առնչվող հարցերի լուծմամբ:

Մ. Կանարը «Արևորդիների հիշատակումը արարներն պատմագրական մի բնագրում» հոդվածում (էջ 201—203) արարներն շամսիյա բառի առթիվ, որ բմբունվել է «արևորդի», գիտական աշխարհին ներկայացնում է Հ. Բարթիկյանի «Գրիգոր Մագիստրոս Պահլավունու թուղթը ասորի եպիսկոպոսին» հոդվածի ուսերեն թարգմանությանը կցած 72—73 ծանոթագրությունները, որոնցում բացատրված է «արևորդի» հասկացությունը: Մ. Կանարն իր կողմից ավելացնում է լրացուցիչ տեղեկություններ հայ արևորդիների գնդի մասին, որ արար էմիրին ծառայելիս է եղել Դամասկոսում 1138 թ.:

Էջ 205—224-ում ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակված Հ. Մ. Ութմազյանի

«Բարեկը և Սյունյաց իշխանները» հոդվածը օգտակար է մանավանդ նրանով, որ հեղինակը հիշատակել և օգտագործել է հայ պատմագրության բոլոր տվյալները, որոնց հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու այս հարցով դրադված եվրոպացի գիտնականները: Մյուս կողմից՝ Մ. Կանարը հիշեցնում է, որ Հ. Ութմազյանը հնարավորություն չի ունեցել նյութ քաղելու Բարեկի վերաբերյալ արաբերեն աղբյուրներից և եվրոպական լեզուներով լույս տեսած ուսումնասիրություններից, որոնք ինքրբերում է ծանոթագրությունների մեջ (էջ 224):

Հայկ Պերպերյանը հայտնի է հայ պատրիարքների մասին «Հանդես ամսօրյա» և «Սիրոն» հանդեսներում հրատարակած հոդվածներով: Մխիթարյան հանդեսում տպագրվածներն ամփոփված են «Նյութեր Կ. Պոլսո հայոց պատմության համար» գրքույկում (Վիեննա, Ազգային մատենաշար, ՃՂԸ, 1965): Տիրապետելով մի շարք լեզուների՝ հայերենի կողքին նա քննադատաբար օգտագործում է բազմաթիվ օտար աղբյուրներ: Հանդեսի սույն հատորում (էջ 233—243) նա վերախմբագրելով հրատարակել է «Սիրոն» (Երուսաղեմ, 1964—1965) պարբերականում տպագրված երկու հոդվածները Անանիա հակաթոռ կաթողիկոսի մասին (1201—1211, 1223): Հեղինակը օգտագործել է ոչ միայն հայ պատմիչների տեղեկությունները, այլև հիշատակարաններ և մանր ժամանակագրություններ. այսպիսով՝ ինքնըստինքյան հասկանալի է վերջիններիս հրատարակության օգտակարությունը հայոց պատմության համար:

Էջ 185—200-ում ֆրանսերեն թարգմանությամբ վերահրատարակվել է Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածը՝ «Հայոց իշխանը արաբ գերիշխանության ժամանակ» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2):

Հանդեսը ֆրանսերեն թարգմանությամբ վերահրատարակել է (էջ 245—314) Մարկվարտի «Պարսկահայք» աշխատությունը, որի հայերեն թարգմանությունն անտիպ գերմաներեն բնագրից 1964 թ. լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսում» Գ. Վ. Արդարյանի ներածակա-նով, թարգմանությամբ և ծանոթագրություններով: Հայերեն աղբյուրներից գերմաներեն լեզվով կատարված մեջբերումները ֆրանսերեն թարգմանության մեջ փոխարինված են հայ պատմագիրների հայտնի թարգմանություններով՝ Բրոսեի, Սեն-Մարտենի և ուրիշների:

Թարգմանաբար վերահրատարակվել է նաև Հ. Ս. Բունիաթովի հոդվածը Բադ և Շաքի քաղաք-ամրոցների տեղադրման մասին:

Այս հոդվածում շոշափված են նույն առանցքային հարցերը, որոնց նվիրված է նույն հեղինակի «Азербайджан в VII—IX вв.» աշ-

խատությունը: Այս գրքի հանգամանալից վերլուծումն ու քննադատությունը տրված է «Պատմա-բանասիրական հանդեսի» 1967 թ. № 1-ում տպագրված Պ. Սևակի և Ա. Մնացականյանի գրախոսության մեջ: Հարկ չհամարելով կրկին անդրադառնալ այդ հարցերին, նշենք միայն, որ Հանդեսի հիշյալ հոդվածում Զ. Բունիաթովը շարունակում է միևնույն միտումը և մի քայլ ևս առաջ գնալով, Շաքի (Շաքի, Շեքի) գավառը տեղադրում է Սյունիքի կենտրոնում, այժմյան Շաքի գյուղի շրջանում, մինչդեռ հայկական, վրացական, արաբական և մյուս սկզբնաղբյուրները Շաքի գավառը տեղադրում են այնտեղ, ուր հետազայում գտնվել է Շաքիի խանությունը, այսինքն այժմյան Նուխի քաղաքի շրջանում, որ նույնպես կոչվում է Շաքի:

Էջ 315—346-ում կարելի է կարդալ Հ. Մանանդյանի «Զափ ու կշիռները հայկական հնագույն աղբյուրներում» ուսումնասիրության ֆորանսերեն թարգմանությունը. հայերեն ընագիրն առաջին անգամ լույս է տեսել Երևանում 1930 թ.: Հանդեսի այս և մյուս թարգմանությունները վկայում են, որ խմբագրության քարտուղարն ուշի-ուշով հետևում է Սովետական Հայաստանի հայագետ գիտնականների հին և նոր աշխատությունների հրատարակությանը և դրանցից առավել արժեքավորները ֆորանսերեն թարգմանությամբ մատուցում արևմտյան գիտնականներին: Այսպիսով Հանդեսն անթերի կատարում է իր ծրագրած հայագիտական աշխատանքը:

Սիլվիո Վան Ռուին անգլերեն զրված իր հոդվածում (էջ 347—357) հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Ամստերդամ քաղաքի հայկական գաղութի մասին՝ դեռևս միջնադարից սկսած. հատկապես կանգ է առնում հայ վաճառականների և նրանց զգեստավորման վրա, որ նկարներով պահպանվել է քաղաքի Ժէ—ԺԸ դդ. վավերագրերում. արտատպված է երկու պատկեր, որտեղ հայ վաճառականները հագնված են պարսկական ձևով: Հոդվածագիրն իր քաղաքի ժամանակագրություններից մեջ է բերում Ամստերդամի հայ վաճառականներից դերմանացի վաճառականների ստացած տպավորությունը. հայերը, որոնց կոչել են նաև «պարսիկներ», մետաքսի մեծ վաճառականներ են եղել: Մի ուրիշ վավերագրում ասված է, որ հայ վաճառականները պատվախնդիր են, ազնիվ և արժանահավատ, որպիսին է և նրանց ժողովուրդը:

Երևանի պետական համալսարանի հրատարակչությամբ լույս տեսած «Ս.Լ. Սրույ Մաշտոց» գրքից ֆորանսերեն թարգմանությամբ վերահրատարակվել է Արամ Ղանալատյանի «Լեւոն Մաշտոցը հայկական ավանդություններում» հոդվածը (էջ 359—367):

«Հնագույն դիտողություններ և էջեր» խորագրի տակ (էջ 369—386) Հ. Պերպերյանի ջանքերով և ծանոթագրություններով հրատարակվել են պատմական և ազգագրական տեղեկություններ հայերի մասին՝ հայերը հրուսեղեմում և հայկական խնջույք: Պորտուգալցի ֆրանցիսկյան կրոնավոր Պանտալեայո Ավելյուդին 1563 թ. երուսաղեմ կատարած ուխտագնացության ուղեգրության երեք ղևիկները հատկացրել է հայերին. երուսաղեմում նա քսրիկամական հարաբերությունների մեջ է մտել հայերի, հատկապես հայկական պատրիարքարանի կրոնավորների հետ: Նրա տեղեկությունները շատ արժեքավոր են այս քաղաքի հայկական գաղութի կենցաղի և հայկական կրոնական ավանդությունների պատմության համար: Հայկական խնջույքի նկարագրությունը արտատպված է Շարդենի Պարսկաստան և արևելյան այլ երկրներ կատարած հայտնի ուղեգրությունից (հատ. Ը, 1811, Փարիզ, էջ 178—190). նկարագրվում է Զուլֆայում 1674 թ. հայ վաճառական Սարհաթի տված ճաշկերույթը: Նկարագրությունը կարևոր է պարսկահայ գաղութի պատմության համար:

Հանդեսի 39—71 էջերում ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը ներկայացրել է, որակով արտատպված լուսանկարներով և հատակագծերով հանդերձ, էջմիածնի վանքի Մայր տաճարն սմրացնելու նպատակով 1954—1959 թթ. կատարված շինարարական աշխատանքները. ինչպես նաև նրա շուրջն ու կամարների տակ արված պեղումների արդյունքները, որոնք նոր լույս են սփռում տաճարի կառուցվածքի, վերափոխությունների, վերանորոգությունների, հայկական և ընդհանրապես քրիստոնեական ճարտարապետության վրա: Դարերի ընթացքում տաճարի վերակառուցումների և վերանորոգումների մասին մեր պատմագիրների վկայությունները բերելուց հետո ճարտարապետը ցույց է տալիս, որ դրանք հաստատվում են պեղումներից հայտնաբերված արդյունքներով. որոնց մանրամասն և գիտական մեկնարանումը կաղմում է նրա ուսումնասիրության երկրորդ մասը: Պեղումների շնորհիվ ի հայտ բերված վիճակից ելնելով՝ նա աշխատել է պատմականորեն որոշել տաճարին նախորդած շինությունները. նրա տեղում եղել է ատրուշան հին ժամանակներում, 279 թ. կամ 301—303 թթ. կառուցվել է եկեղեցի, այժմյան տաճարի խաչածե հատակագիծն ստեղծվել է ոչ թե 7-րդ դարում, ինչպես ցարդ կարծվում էր, այլ 480-ական թթ.: Իր գիտական նպատակներին հասնելու համար ուսումնասիրողը դիմել է նաև հայկական մյուս եկեղեցական հուշարձանների չափագրություններին, հատակագծերին և կառուցման ձևին: Արժեքավոր են ու շատ կարևոր

մասնավորապես իշխանների տաճարի կառուցման և ընդհանրապես հայկական ճարտարապետության պատմության վերաբերյալ Ա. Սահյանի եզրակացությունները:

Ժ.-Մ. Թիերին, որ ընթերցողներին հայտնի է Հանդեսի նախորդ երկու հատորներից, այսօր (էջ 73—90) մանրամասն և գիտականորեն ուսումնասիրում է Ղարսի շրջանի հայկական երկու հուշարձան՝ Գմբեթավոր և Զանգակավոր եկեղեցիները, ներկայացնելով տեղում անձնապես հանած լուսանկարներ և հատակագծեր: Հողվածի մեր ամփոփ հայերեն թարգմանությունը կարելի է կարդալ «Սովետական արվեստ» ամսագրի 1968 թ. համարում: Թիերիի՝ մեր շարտարապետական հուշարձաններին նվիրված ուսումնասիրությունները լիովին բավարարում են ճարտարապետական գիտության պահանջները. նա չի անտեսում երկրի պատմական իրադարձությունները, հուշարձանի կառուցման ժամանակաշրջանն ու պատմությունը, հատակագիծը, կառուցման ոճը, զարդաքանդակները, արձանագրությունները և այլն. անհրաժեշտության դեպքում նա հաճախ համեմատության մեջ է դնում հայկական զանազան հուշարձաններ՝ այս կամ այն հարցը լուծելու համար: Տեղեկությունների թարմությունը և ականատեսի վկայությունները, տեղում կատարված լուսանկարները բարձրացնում են այս անխոնջ ճանապարհորդ հեղինակի աշխատության արժանիքը: Նրան երբեմն հեղինակակից է դառնում տիկ. Թիերին, որ իր ամուսնու շարքաշ ուղեկիցն ու օգնականն է գիտական արշավներում:

Հանդեսի II հատորում (1965, էջ 223—238) Ա. Խաչատրյանը ներկայացրել էր Տոկարսկու հին Հայաստանի ճարտարապետությանը նվիրված ուսերեն աշխատության (Երևան, 1946, II հրատ. 1961) առաջին մասը. Հանդեսի սույն հատորում (էջ 119—141) նա ներկայացնում է երկրորդ մասը, համեմատում աշխատության երկու հրատարակությունները, անում դիտողություններ և լրացումներ: Այս վերլուծությունն անտարակույս օգտակար կլինի եվրոպացիներին, որոնք հետաքրքրվում են հայկական ճարտարապետությամբ:

Լենինգրադի Ասիական ժողովուրդների ինստիտուտի աշխատակից Անահիտ Փերիխանյանը Հանդեսի գլխավոր խմբագրի առաջարկով ֆրանսերեն թարգմանությամբ վերահրատարակել է (էջ 17—29) «Պատմա-րանասիրական հանդեսը» 1965 թ. 4-րդ համարում լույս ընծայած իր հողվածը Արտաշես թագավորի արամեերեն վիճարձանագրության մասին, որ 1964 թ. հայտնաբերվել էր Տաթևում: Տրված են նոր մեկնաբանումներ, արձանագրության լեզվի բարբառային պատկանելության վերաբերյալ արված

Քն վերապահումներ, որովհետև դրանք պահանջում են ավելի ամուր փաստարկումներ:

Որքան ավելի լուրջ և հիմնավոր կերպով ուսումնասիրվի հայերեն ձեռագրերի մանրակարգությունը՝ այնքան որոշակի կդառնան հայ մանրակարգական դպրոցները կամ արվեստանոցները, կտեղայնացվեն դրանք և կորոշվեն պահպանված մանրանկարների պատկանելությունը այս կամ այն դպրոցին: Ուսումնասիրությունների շնորհիվ կստեղծվի հայ մանրակարգության ամբողջական պատմությունը: Այսպես՝ Տ. Իղմայլովան, համառոտակի ցույց տալով Երուսաղեմի № 1041 և Մաշտոցյան Մատենադարանի № 1057 հայերեն ձեռագրերի մանրանկարների նմանությունը՝ կանգ է առնում դրանց խորանների կատարման արվեստի և վերլուծության վրա (էջ 91—117): Թեև այս ձեռագրերի մանրանկարներն ունեն ոչական առանձնահատկություններ, բայց պատկանում են ըստ հեղինակի, միևնույն դպրոցին:

Հայագիտական հանդեսի խմբագրական կազմի անդամ, արվեստաբան Ա. Գրաբարը հայկական մանրակարգության մասնագետ չէ. արևելյան և արևմտյան ժողովուրդների արվեստներն ուսումնասիրելիս նա հաճախ անհրաժեշտություն է զգում դիմելու հայկական որևէ հուշարձանի, բրպեսզի լրացնի պատմական տեղեկությունները սասանյան, պարթևական, պարսկական, արաբական, հելլենիստական, բյուզանդական, լատինական և մինչև իսկ չինական ստեղծագործությունների վերաբերյալ, որոնց արտացոլումները կամ աղդեցությունները միջնադարում երեվան են գալիս Հայաստանում: Այսպիսով լրացվում է նվաճ ժողովուրդների արվեստի պատմության թերին, մյուս կողմից՝ ավելի որոշակի է դառնում հայկական արվեստի դիրքը իր ժամանակի արվեստների ընտանիքում: Ա. Գրաբարը մտադիր է այդ հարցերն ուսումնասիրել ի շարք հողվածներում: Հանդեսի սույն հատորում լույս ընծայած ուսումնասիրության մեջ (էջ 31—37) նույնպես է աշխատեցնում և սասանյան արվեստների աղդեցությունը կամ արտացոլումները հայկական մանրակարգության մեջ և տապանաքարերը զարդաքանդակելու արվեստում 6—7-րդ դդ.: Հեղինակը կանգ է առնում Մաշտոցյան Մատենադարանի № 229 հայերեն ձեռագրում գետեղված՝ մոզերի երկրպագությունը պատկերող մանրանկարի վրա: Հայկական տապանաքարերի ուսումնասիրության համար նա դիմել է Գարեգին Հովսեփյանի հրատարակությանը (Նյու-Յորք, 1944) և Բ. Առաքելյանի «Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում» աշխատությանը (Երևան, 1949): Ներդիր տրված են ուսումնասիրվող արվեստի գործերի լուսանկարները: Հողվածագիրը

եղրակացնում է, որ հայ մանրանկարիչներն ու ժանդակագործները ծանոթ են եղել սասանյան Պարսկաստանի արվեստին և որոշ չափով կրել դրա ազդեցությունը, բայց դա չի եղել նրանց ներշնչման աղբյուրը:

Հ. Տեր-Ղևոնդյանն ուսումնասիրել է (էջ 143--146 և 3 լուսանկար) Երևանի Մատենադարանի հայերեն երեք ձեռագրի արծաթապատ և ոսկեպատ պահպանակներ, որոնք զաղափար են սալիս Վասպուրականի ոսկերիչ հայ վարպետների արվեստի մասին:

Հանդեսի սույն հատորում գրախոսվել են հայագիտական և հայագիտության հետ տանջող աշխատություններ, գիտական ժողովածուներ, Հիշենք մի քանիսը:

Լեզվաբանների ուշադրությունը պետք է հրավիրել է. Իննվենիստի զգուշացնող գրախոսության վրա, որտեղ քննադատվում է Ս. է. Մանի «Armenian and Indo-European (Historical Philology)» աշխատությունը (Լոնդոն, 1963). գրախոսությունը արտատպված է Փարիզի լեզվաբանական ընկերության տեղեկագրից (BSL, հատ. LX, պրակ II, 1965, էջ 36—39). Բավարարվենք մեջ բերելով գրախոսության վերջին տողերը. «Զուր է շարունակել սույն քննարկումը: Այն բոլոր ճիշտ տվյալները, որ կարելի է գտնել այս էջերում, Հյուբշմանից, Մեյեից և ստուգաբանական բառարաններից են (առանց աղբյուրի նշման): Մնացածն արժեքագուրկ է: Մենք ընթերցողներին կտրականապես պետք է զգուշացնենք այս գրքից»:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի II հատորը կազմողները պետք է որ

ծանոթացած լինեն առաջին հատորի մասին Սիրարփի Տեր-Ներսեսյանի գրախոսությանը և հավանաբար հաշվի առած կլինեն արված մի քանի առաջարկներն ու դիտողությունները:

Կոլումբիա համալսարանից Նինա Գ. Գարսանյանը համառոտակի և քննադատաբար ներկայացրել է «Византийский временник» հանդեսի 1947—1965 թթ. համարներում լույս տեսած հայագիտական հոդվածները: Նա գտնում է, որ հայագիտության զարգացման համար մեծապես նպաստավոր են հայ գիտնականների աշխատություններն ու դրանց թարգմանությունները, որովհետև նրանք օգտագործում են արմատյան գիտնականներին անմատչելի աղբյուրներ:

Այս հատորում ևս Հայկ Պերպերյանը հանդես է եկել իրեն բեղմնավոր և շնորհալի մատենախոսնա ներկայացրել է Հ. Մ. Ութմազյանի աշխատությունը Խ—Ժ դդ. Սյունիքի վերաբերյալ, Մատենադարանը ծանոթացնող գրքույկները, նրա գիտական նյութերի ժողովածուները և Բանբերները, ինչպես նաև Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Armenian Manuscripts in the Freer Gallery of Art» ձեռագրացուցակը (Վաշինգտոն, 1963):

Հատորի վերջում տրված է խմբագրության ստացած գրականության ցանկը, որտեղից երևում է, որ դժբախտաբար Հայաստանից ոչ մի գիրք չի ուղարկված Հանդեսին:

Մ. ՄԵՆԱՍՅԱՆ:

С. А. ЕСАЯН, *Оружие и военное дело древней Армении (III—I тыс. до н. э.)*, Ереван, 1966, 156 стр., цена 75 коп.

Ս. Ա. ԵՍԵՅԱՆ, *Ձեռքերը և ռազմարվեստը հին Հայաստանում (III—I հազ. մ. թ. ա.)*, Երևան, 1966, 156 էջ, գինը 75 կ.

Յուրաքանչյուր երկրի և պատմա-մշակութային շրջանի հնագիտական հուշարձաններն ունեն իրենց յուրահատուկ կողմերը, իրենց գերիշխող հատկանիշները: Այդ տեսակետից բացառություն չեն կազմում նաև հին Հայաստանի հուշարձանները, որ ափսոսանք է Հայկական լեռնաշխարհ կոչվող աշխարհագրական ընդարձակ տարածության վրա: Եվ իսկապես, Հայաստանի պատմության թանգարանի էքսպոզիցիայի հետ առաջին խոշ ծանոթությունը այցելուին զարմացնում է հին բրոնզյա իրերի ինքնատիպությամբ, որն այդ երկրի նյութական մշակույթի

գերիշխող հատկանիշն է մեկուկես-երկու հազարամյակների ընթացքում:

Հայաստանի բրոնզյա իրերը արժեքավոր պատմական աղբյուրներ են: Բրոնզյա բազմա-տեսակ իրերի մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմում զենքերը՝ սրեր, դաշույններ, կացիներ, եետառաքներ, նիզակներ, վահաններ.

¹ А. А. Мартиросян, *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964.